Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

369.1911(47.925)

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀՍԽՀ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Հաստատված ՀՍԽՀ Կենտգործկոմի
յեվ Ժողկոմխորհի կողմից
1931 թ. ապրիլի 12-ին

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ

ՅԵՐԵՎԱՆ — 1931

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀՍԽՀ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Հաստատված է ՀՍԽՀ Կենտգործկոմի յեվ Ժողկոմխորհի կողմից 1931 թ. ապրիլի 12-ին

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

*1. ՀՍԽՀ Կարմիր Խաչի Ընկերության նպատակն է առողջացնել աշխատանքի և կենցաղի պայմանները և օգնություն ցույց տալ այն անձանց, վորոնք տուժել են ռազմական գործողություններից և տարերային աղետներից:*

*2. ՀՍԽՀ Կարմիր Խաչի Ընկերությունը խորհրդային սոցիալիստական միուս հանրապետությունների համանուն կազմակերպությունների հետ մտնում է Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների Միության մեջ, պահպանելով իր ներքին գործունեության մեջ լիակատար ինքնուրույնություն, այդ թվում նաև իր ցանկությամբ Միությունից դուրս գալու իրավունքը, նպատակ ունենալով ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1930 թ. դեկտեմբերի 12-ին հաստատած Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների Միության կանոնադրության հիման վրա (ԽՍՀՄ Օր. և Կարգ. Ժող. 1930 թ., № 47, հոդ. 495) կարգավորել Կար-*

միր Խաչի բոլոր աշխատանքները ԽՍՀՄ սահմաններում։

3. ՀՍԽՀ Կարմիր Խաչի Ընկերությունը մտնում է Միջազգային Կարմիր Խաչի կազմի մեջ և համաձայնեցնում է իր գործունեությունը ԽՍՀՄ Կառավարության կողմից ընդունված Կարմիր Խաչի կոնվենցիաների, նաև Կարմիր Խաչի Միջազգային կոնֆերանսների վորոշումների հետ։

4. Ընկերությունը կապեր է պահպանում օտարերկրյա Կարմիր Խաչի ընկերությունների և Կարմիր Խաչի միջազգային կազմակերպությունների հետ, համաձայնեցնելով իր գործողությունները ԽՍՀՄ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունների Միության մարմինների միջոցով։ Ընկերությունը կազմում է արտասահմանյան ներկայացուցչություններ, համաձայնության գալով Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների Միության Գործադիր Կոմիտեյի հետ։

5. Ընկերությունը վայելում է բացառիկ իրավունք ոգտագործելու Կարմիր Խաչի Միջազգային նշանը։

Ծանոթություն 1.—Այդ նշանը գործ է ածում Ընկերությունը պատկանող՝ ա) կնիքի, բ) լազարեթների, հիվանդանոցների, պահեստների, փոխադրական միջոցների և այլ հիմնարկների վրա, գ) Ընկերության հիմնարկներում ծառայող անձանց թևերի (ձախ ձեռքի) վրա, իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս և դ) Ընկերության անդամների համար սահմանած կրծքանշանի վրա։

Ծանոթություն 2.— Ընկերությունն իրավունք ունի հարուցել քրեական հետապնդում այն անձանց և հիմնարկությունների դեմ, վորոնք ապորինաբար կոգտագործեն այդ նշանը։



1-25269բ

Ծանոթություն 3.—Նույնպիսի աշխատանքներ կատարող այլ հիմնարկները և կազմակերպությունները Կարմիր Խաչի նշանից կարող են ոգտվել միայն Ընկերության Կենտրոնական Կոմիտեյի թույլտվությամբ։

6. Ընկերությունը վայելում է իրավաբանական անձի բոլոր իրավունքները և ոգտվում է հարկային, մաքսային, փոխադրական դատավարական և գոյություն ունեցող այլ արտոնություններից։

7. Ընկերությունը, վորպես իրավաբանական անձ, կարող է գույք գնել, ոտարել և գրավ դնել, նվեր և ժառանգություն ստանալ, բանալ բանկերում ընթացիկ և այլ հաշիվներ, կատարել ամեն տեսակի գործարքներ, վայելել դատավարական բոլոր իրավունքները, իբրև անդամ մտնել ուրիշ ընկերությունների մեջ և այլն։

Ծանոթություն.— Ընկերությունն իր ամբողջությամբ, հանձինս իր Կենտրոնական Կոմիտեյի և նրա շրջանային կոմիտեները, վորոնք նույնպես իրավաբանական անձի իրավունք են վայելում, մեկը մյուսի համար վորևէ պատասխանատվություն չեն կրում և իրենց պարտքերի դիմաց պատասխանատու յեն միայն այն գույքով, վորը գտնվում է նրանցից յուրաքանչյուրի տրամադրության տակ գործող որենսդրությամբ մատնանշված սահմաններում։

8. Հայաստանի Կարմիր Խաչը և նրա շրջանային կոմիտեներն իրենց պատկանած գույքից ոգտվելու վերաբերմամբ վայելում են պետական հիմնարկներին տրված արտոնություններ։

9. Ընկերության և նրա շրջանային կոմիտեների հիմնարկները, վորոնք իրագործում են Կարմիր Խաչի

միր Խաչի բոլոր աշխատանքները ԽՍՀՄ սահմաններում:

3. ՀՍԽՀ Կարմիր Խաչի Ընկերությունը մտնում է Միջազգային Կարմիր Խաչի կազմի մեջ և համաձայնեցնում է իր գործունեությունը ԽՍՀՄ Կառավարության կողմից ընդունված Կարմիր Խաչի կոնվենցիաների, նաև Կարմիր Խաչի Միջազգային կոնֆերանսների վորոշումների հետ:

4. Ընկերությունը կապեր է պահպանում օտարերկրյա Կարմիր Խաչի ընկերությունների և Կարմիր Խաչի միջազգային կազմակերպությունների հետ, համաձայնեցնելով իր գործողությունները ԽՍՀՄ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունների Միության մարմինների միջոցով: Ընկերությունը կազմում է արտասահմանյան ներկայացուցչություններ, համաձայնության գալով Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների Միության Գործադիր Կոմիտեի հետ:

5. Ընկերությունը վայելում է բացառիկ իրավունք օգտագործելու Կարմիր Խաչի Միջազգային նշանը:

Ծանոթություն 1.—Այդ նշանը գործ է ածում Ընկերությունը պատկանող՝ ա) կնիքի, բ) լազարեթների, հիվանդանոցների, պահեստների, փոխադրական միջոցների և այլ հիմնարկների վրա, գ) Ընկերության հիմնարկներում ծառայող անձանց թևերի (ձախ ձեռքի) վրա, իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս և դ) Ընկերության անդամների համար սահմանած կրծքանշանի վրա:

Ծանոթություն 2.— Ընկերությունն իրավունք ունի հարուցել քրեական հետապնդում այն անձանց և հիմնարկությունների դեմ, վորոնք ապօրինաբար կօգտագործեն այդ նշանը:



ՀԱՍՍՌ
1-25269բ

Ծանոթություն 3.—Նույնպիսի աշխատանքներ կատարող այլ հիմնարկները և կազմակերպությունները Կարմիր Խաչի նշանից կարող են օգտվել միայն Ընկերության Կենտրոնական Կոմիտեի թույլտվությամբ:

6. Ընկերությունը վայելում է իրավաբանական անձի բոլոր իրավունքները և օգտվում է հարկային, մաքսային, փոխադրական, դատավարական և գոյություն ունեցող այլ արտոնություններից:

7. Ընկերությունը, վորպես իրավաբանական անձ, կարող է գույք գնել, օտարել և գրավ դնել, նվեր և ժառանգություն ստանալ, բանալ բանկերում ընթացիկ և այլ հաշիվներ, կատարել ամեն տեսակի գործարքներ, վայելել դատավարական բոլոր իրավունքները, իբրև անդամ մտնել ուրիշ ընկերությունների մեջ և այլն:

Ծանոթություն.— Ընկերությունն իր ամբողջությամբ, հանձինս իր Կենտրոնական Կոմիտեի և նրա շրջանային կոմիտեները, վորոնք նույնպես իրավաբանական անձի իրավունք են վայելում, մեկը մյուսի համար վորևէ պատասխանատվություն չեն կրում և իրենց պարտքերի դիմաց պատասխանատու յեն միայն այն գույքով, վորը գտնվում է նրանցից յուրաքանչյուրի տրամադրության տակ գործող օրենսդրությամբ մատնանշված սահմաններում:

8. Հայաստանի Կարմիր Խաչը և նրա շրջանային կոմիտեներն իրենց պատկանած գույքից օգտվելու վերաբերմամբ վայելում են պետական հիմնարկներին տրված արտոնություններ:

9. Ընկերության և նրա շրջանային կոմիտեների հիմնարկները, վորոնք իրագործում են Կարմիր Խաչի

գործունեության անմիջական շրջանի մեջ մտնող նպատակները՝ (դեղատներ, սանատորիաներ և այլն), յեթե նրանց յեկամուտները ամբողջապես օգտագործվում են Ընկերության առաջադրած նպատակներն իրականացնելու համար, ազատվում են պետական և տեղական հարկերից ու տուրքերից գործող օրենսդրության համաձայն:

10. Ընկերությունն ունի իր կնիքը—«Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերություն» մակագրությամբ և Կենտրոնական Կոմիտեյի կամ տվյալ շրջանային կոմիտեյի հիշատակությամբ:

11. Ընկերության աշխատակիցները վայելում են պետական պաշտոնյաներին վերապահված իրավունքներ:

## II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՅԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

12. Ընկերությունն իրագործում է իր նպատակները, կոնտակտ պահելով և համաձայնեցնելով իր պլանները համապատասխան գերատեսչությունների և կազմակերպությունների հետ:

13. Ընկերության նպատակներն են.

ա) ամեն կերպ ամրացնել յերկրի սանիտարական պաշտպանությունը աշխատավորների մասսայական պատրաստության միջոցով:

բ) օգնություն ցույց տալ աշխատավորների աշխատանքի և կենցաղի պայմանները առողջացնելու գործում և մասնավորապես յերեխաների առողջության պաշտպանության բնագավառում.

գ) պատերազմի ժամանակ բժշկական-սանիտարա-



կան օգնություն ցույց տալ հիվանդ ու վիրավոր զինվորներին և պատերազմի այլ զոհերին.

դ) խնամք տանել ռազմական և այլ գերիների (интоpнированные) նույնպես և գաղթականների մասին

յե) պատրաստել անհրաժեշտ բժշկա-սանիտարական կադրեր և բժշկա-սանիտարական հիմնարկություններ ու գույք, թե պատերազմի կարիքների և թե խաղաղ ժամանակի համար.

զ) օգնություն ցույց տալ ազգաբնակչությանը տարերային և այլ աղետների ժամանակ.

է) նպաստել յերկրի սան-կուլտուրական աշխատանքների զարգացմանը, մասնակցելով սոցիալական հիվանդությունների դեմ մղվող պայքարին և այլ ձեռնարկություններին՝ բնակչության բժշկա-սանիտարական սպասարկման բնագավառում.

ը) հրատարակել Ընկերության նպատակները լուսաբանող պարբերական և այլ գրականություն:

## III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

14. Ընկերությունը կազմված է իսկական, իրավական և պատվավոր անդամներից.

ա) իսկական անդամ կարող են լինել Խորհրդային Միության այն բոլոր քաղաքացիները, վորոնք ընտրական իրավունք են վայելում ՀՍԽՀ Սահմանադրության համաձայն.

բ) իրավական անդամ կարող են լինել այն հիմնարկությունները, կազմակերպությունները, գերատեսչությունները և ձեռնարկությունները, վորոնք ցանկություն կհայտնեն անդամագրվել Ընկերությանը.

գ) պատվավոր անդամ կարող են լինել այն ան-

ձինք, վորոնք ընտրվում են առանձին ծառայությունների չնորհիվ:

Ծանոթություն.— Պատվավոր անդամներին ընտրում է Կ. Խ. Ընկերության Կենտրոնական Կոմիտեն և հաստատում է Հանրապետական Համագումարը:

15. Ընկերության իսկական անդամները վճարում են տարեկան 10 կոպեկից մինչև 5 ռուբլի: Իրավական անդամները վճարում են՝ կենտրոնական հիմնարկները —վոչ պակաս քան 50 ռուբլի անդամավճար, իսկ շըր—ջանային հիմնարկները և հասարակական կազմակերպությունները—վոչ պակաս քան 10 ռուբլի:

Անդամավճարի չափը և մուծման յեղանակը վորոշում է Կենտրոնական Կոմիտեն:

Ծանոթություն.— Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերության անդամը, վորը վճարել է իր անդամավճարը, տեղափոխվելով Խորհրդային Միության մի այլ հանրապետություն, պահում է իր անդամության կոչումն այդ հանրապետության Կարմիր Խաչի կամ Կարմիր Մահիկի Ընկերության մեջ:

## IV ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

16. Ընկերության գործող մարմիններն են.

ա) Ընկերության Համագումարը,

բ) Կենտրոնական Կոմիտեն,

գ) Կենտրոնական Կոմիտեյի Նախագահությունը,

դ) Կենտրոնական Վերստուգիչ Հանձնաժողովը,

յե) Նաև շրջանային կոմիտեները և բջիջներն ու նրանց գործող մարմինները:



### Ա. Համագումարը.

17. Կարմիր Խաչի Համագումարը Ընկերության գերագույն մարմինն է: Համագումարները լինում են հերթական և արտակարգ: Հերթական համագումարը հրավիրվում է 2 տարին մի անգամ, իսկ արտակարգ համագումարը հրավիրվում է ամեն անգամ, յերբ ա) Կենտրոնական Կոմիտեն այդ անհրաժեշտ է գտնում, բ) յերբ այդ պահանջում է վերստուգիչ հանձնաժողովը և գ) յերբ այդ պահանջում է շրջանային կոմիտեների առնվազն ½-ը:

Ծանոթություն.— Հարկ յեղած դեպքում Կենտրոնական կոմիտեն հրավիրում է կոնֆերանսներ, վորոնց մասին Կենտրոնական Կոմիտեն մշակում է հատուկ հրահանգ:

18. Համագումարի կազմը, ներկայացուցչական սիստեմը և նորմաները սահմանում է Կենտրոնական Կոմիտեյի պլենումը և պաշտոնապես հայտարարում է համագումարից առնվազն 2 ամիս առաջ:

19. Համագումարը համարվում է օրինական, յեթե ներկա յե ընտրված պատգամավորների առնվազն կեսը:

Ծանոթություն.—Համագումարին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հատուկ հրավիրված անձինք, կամ հիմնարկությունների ներկայացուցիչները:

20. Համագումարի իրավասության խնդիրներն են.

ա) քննել և հաստատել Կենտրոնական Կոմիտեյի ընդհանուր հաշվետվությունը Ընկերության գործունեության և միջոցների մասին.

բ) քննել և հաստատել Կենտրոնական Կոմիտեյի

առաջարկները կանոնադրության փոփոխման մասին.

գ) ընտրել Կենտրոնական Կոմիտե և վերստուգիչ հանձնաժողով.

դ) հրահանգներ տալ Կենտրոնական Կոմիտեյին Ընկերության առաջիկա գործունեության մասին.

յե) կանոնադրությամբ նախատեսված այն նոր հարցերը, որոնք կառաջարկվեն Կենտրոնական Կոմիտեյի և շրջանային կոմիտեների կողմից, կամ որոնք կհարուցվեն Համագումարի կողմից:

21. Համագումարի զբաղմունքների օրակարգը կազմում է Կենտրոնական Կոմիտեն և հայտարարում է Համագումարի բացման օրից մեկ ամիս առաջ:

Յեթե Ընկերության շրջանային կոմիտեները կամ առանձին անդամները կամենում են առաջարկ մտցնել Համագումար՝ ի քննություն, նրանք պարտավոր են այդ առաջարկը ներկայացնել Կենտրոնական Կոմիտեյին Համագումարից առնվազն մեկ և կես ամիս առաջ:

Ծանոթություն.— Ընկերության անդամներն իրենց առաջարկները նախապես ներկայացնում են Կենտրոնական Կոմիտեյին տեղական կոմիտեների միջոցով:

22. Համագումարում քննվող հարցերը վճռվում են ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ ընտրությունները կատարվում են Համագումարի հայեցողությամբ սահմանված յեղանակով:

23. Համագումարն ընտրում է նախագահություն և քարտուղարություն: Վերջինը կազմում է Համագումարի արձանագրությունը, որը վավերացնելուց հետո, հանձնվում է Կենտրոնական Կոմիտեյին:



## Բ) Կենտրոնական Կոմիտե

24. Ընկերությունը իրավական անձ է՝ ի դեմս իր Կենտրոնական Կոմիտեյի, որը վարում է Ընկերության բոլոր գործերը այս կանոնադրությամբ և Համագումարի որոշումների սահմաններում:

Համագումարների միջանկյալ ժամանակամիջոցում Կենտրոնական Կոմիտեն հանդիսանում է Ընկերության գերագույն մարմինը և իրավասու է լուծելու Ընկերության կանոնադրությամբ նախատեսված բոլոր հարցերը:

25. Կենտրոնական Կոմիտեն բաղկացած է առնվազն 21 անդամից և 5 փոխ անդամից, որոնք փոխարինում են կազմից դուրս յեկած անդամներին: Կենտրոնական Կոմիտեն ընտրվում է 2 տարի ժամանակով:

Կենտրոնական Կոմիտեյին անդամակցում է ՀՍԽՀ Առողջապահության Ժողովրդական Կոմիսարը, կամ նրա ներկայացուցիչը:

26. Կենտրոնական Կոմիտեն իրավունք ունի կոոպտացիայի կարգով ուժեղացնելու իր կազմը գլխավոր անձնավորություններով, հրավիրելով առավելն չորս հոգի:

27. Կենտրոնական Կոմիտեյի Պլենումի նիստերը գումարվում են առնվազն տարեկան յերկու անգամ: Անհրաժեշտ դեպքերում նիստերը գումարվում են նախագահության որոշմամբ կամ Կենտրոնական Կոմիտեյի հինգ անդամի պահանջով:

28. Կենտրոնական Կոմիտեյի որոշումները օրինական են, յեթե ժողովին ներկա յեն նրա անդամների առնվազն կեսը:

29. Համագումարի իրավասությունը վերապահ-

ված հարցերը լուծելու համար, անհրաժեշտ է Կենտրոնական Կոմիտեի պլենումի ներկա յեղող անդամների ձայների 2/3 մեծամասնությունը։

30. Կենտրոնական Կոմիտեն կազմում և հաստատում է Ընկերության տարեկան նախահաշիվը։

31. Կենտրոնական Կոմիտեն հաստատում է շրջանային կոմիտեների կազմը և նրանց սկզբունքային բնույթ կրող վորոշումները։ Հարկ յեղած դեպքում նա իրավասու յե կասեցնելու տեղական կոմիտեի այս կամ այն վորոշումը։ Կենտրոնական Կոմիտեն իրավասու յե նաև հարկ յեղած դեպքում լուծելու առանձին շրջանային կոմիտեների կազմը, ինչպես նաև առանձին բջիջները։

32. Կենտրոնական Կոմիտեն ընտրում է իր միջից նախագահություն բաղկացած առնվազն 7 հոգուց. մի նախագահից, յերկու տեղակալից, մի պատասխանատու քարտուղարից, մի գանձապահից և յերկու կամ ավելի անդամներից։

Նախագահությունը Կենտրոնական Կոմիտեի գործադիր մարմինն է, վորին իրավունք է վերապահված անհետաձգելի դեպքերում կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները զեկուցելով այդ մասին Կենտրոնական Կոմիտեի առաջիկա նիստում։

Ծանոթություն.— Նախագահության գործունեությունը կարգավորվում է Կենտրոնական Կոմիտեի հատուկ հրահանգով։

33. Նախագահության նիստերը տեղի յեն ունենում առնվազն ամիսը մեկ անգամ, նաև հարկ յեղած դեպքում Կենտրոնական Կոմիտեի նախագահի հրավերով։



Նախագահության վորոշումները օրինական են, յեթե ներկա յեն նախագահության առնվազն յերեք անդամը։ Նիստերի համար կազմվում են արձանագրություններ, վոր ստորագրում են նախագահության բոլոր ներկա յեղող անդամները։

34. Կենտրոնական Կոմիտեն կարող է նշանակել Ընկերության արտասահմանյան ներկայացուցիչներ, կամ լիազորներ, վորոնք առաջնորդվում են Կենտրոնական Կոմիտեի հրահանգներով և պատասխանատու յեն նրա առաջ։

35. Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովը բաղկացած է յերեք անդամից և յերկու փոխանդամից, վորոնք ընտրվում են համագումարի կողմից նույն ժամանակամիջոցով, ինչպես և Կենտրոնական Կոմիտեն,— այն անձերից, վորոնք վորևէ այլ պաշտոն չեն վարում Կենտրոնական Կոմիտեյում։

36. Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովը գումարվում է վորոշված ժամկետներում կամ իր նախագահի հրավերով։

37. Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովը իրավունք ունի վերաքննելու Կենտրոնական Կոմիտեի բոլոր հիմնարկությունները և նրանց դրամարկղը։ Կատարած վերստուգումների վերաբերյալ բոլոր արձանագրությունները պետք է հանձնվեն Կենտրոնական Կոմիտեյին։ Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի անդամները իրավունք ունեն ներկա լինելու Կենտրոնական Կոմիտեի և նրա նախագահության բոլոր նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով։

### Գ. Տեղական մարմիններ

38. Ընկերությունը ՀՍԽՀ շրջաններում ունի շըրջանային կոմիտեներ, վորոնք կատարում են Կարմիր Խաչի աշխատանքները՝ համաձայն Ընկերության կանոնադրության և Կենտրոնական Կոմիտեյի դիրեկտիվների:

> Ծանոթություն.— Ոտար յերկրներում Հայաստանի Կարմիր Խաչը կարող է ունենալ Հ. Կարմիր Խաչի ոժանդակ մարմիններ:

39. Ընկերության բոլոր ղեկավար մարմինները սկսած Կենտրոնական Կոմիտեյից մինչև շրջանային կոմիտեները վայելում են իրավական անձի իրավունքներ:

40. Ընկերության տեղական մարմիններն են.

ա) Շրջանային համագումարը,

բ) Շրջանային Կոմիտեն,

գ) Քաղաքային կոմիտեն,

դ) Շրջանային վերստուգիչ հանձնաժողովը,

ե) Բջիջը:

41. Ընկերության շրջանային համագումարի իրավասությանն է վերաբերում՝

ա) Շրջանային կոմիտեյի ընտրությունը.

բ) վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունը.

գ) շրջանային կոմիտեյի նախահաշվի քննությունը, շրջանային կոմիտեյի և վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումների ու հաշվետվության քննությունն ու հաստատումը.

դ) շրջանային կոմիտեյի աշխատանքների ծրագրի հաստատումը մինչև հաջորդ համագումարը.



ե) շրջանային կոմիտեյի կամ վերստուգիչ հանձնաժողովի կողմից համագումար մտցրած հարցերի լուծումը:

> Ծանոթություն.— Շրջանային համագումարների վորոշումները արձանագրությունների հետ միասին ներկայացվում են Կենտրոնական Կոմիտեյին ի տեղեկություն և ի հաստատություն:

42. Շրջանային համագումարը հրավիրվում է յերկու տարին մեկ անգամ: Համագումարի ժամանակը, որակարգը, տեղը և նրա ներքին կանոնադրությունը սահմանվում են շրջանային կոմիտեների կողմից և հաստատվում են Կենտրոնական Կոմիտեյի կողմից: Համագումարների ներկայացուցչության կարգն ու նորմաները սահմանվում են Կենտրոնական Կոմիտեյի կողմից: Համագումարները կայացած են համարվում, յեթե ներկա յե ընտրված պատգամավորների առնվազն կեսը:

> Ծանոթություն.—Կենտրոնական Կոմիտեյին իրավունք է վերապահվում առանձին շրջանների համագումարները հրավիրել ավելի հաճախ, քան յերկու տարին մեկ անգամ:

43. Շրջանային համագումարների միջանկյալ ժամանակամիջոցում շրջանային կոմիտեն հանդիսանում է շրջանի Կարմիր Խաչի գերագույն մարմինը:

44. Շրջանային կոմիտեն ընտրվում է համագումարի կողմից սահմանված կարգով և ժամանակով մինչև հաջորդ համագումարը: Շրջանային կոմիտեյի նիստերը տեղի յեն ունենում առնվազն ամիսը մի անգամ:

45. Շրջանային կոմիտեյի նախագահին, նրա տե-

ղակալին և քարտուղարին ընտրում է Կոմիտեն իր կազմից:

46. Շրջանային կոմիտեյի իրավասության խնդիրներն են՝

ա) կազմել և քննության յենթարկել շրջանի Կարմիր Խաչի բոլոր համագումարների միջանկյալ ժամանակամիջոցի համար և ներկայացնել Կենտրոնական Կոմիտեյին ի հաստատություն.

բ) կիրառել Ընկերության Հանրապետական Համագումարի, Կենտրոնական Կոմիտեյի և շրջանային համագումարի վորոշումները.

գ) հաստատել աշխատանքների տարեկան ծրագիրը շրջանային համագումարի կողմից հաստատված ընդհանուր ծրագրի հիման վրա.

դ) կազմել աշխատանքի ընդհանուր ծրագիրը՝ համաձայն Ընկերության Հանրապետական Համագումարի, Կենտրոնական Կոմիտեյի և շրջանային համագումարի վորոշումների.

յե) մշակել զանազան հարցեր՝ Հանրապետական Համագումարին, Կենտրոնական Կոմիտեյին և շրջանային համագումարին ի քննություն ներկայացնելու համար:

47. Շրջանային կոմիտեյի վորոշումները օրինական են, յեթե ներկա յե նրա անդամների թվի առնվազն կեսը: Կոմիտեյի նիստերի մասին կազմվում են արձանագրություններ, վոր ստորագրում են նախագահը և քարտուղարը:

48. Շրջանային վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում է շրջանային համագումարում 3 անդամի



կազմով այն անձերից, վորոնք պաշտոններ չեն վարում շրջանային կոմիտեյում: Վերստուգիչ հանձնաժողովն ընտրում է իր նախագահը իր անդամների միջից:

49. Վերստուգիչ հանձնաժողովն իրավունք ունի վերաքննել շրջանի Կարմիր Խաչի բոլոր հիմնարկները ու նրանց դրամարկղները: Կատարված վերստուգումների վերաբերյալ բոլոր արձանագրությունները պետք է հանձնվեն շրջանային կոմիտեյին: Վերստուգիչ հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն ներկա լինել Կոմիտեյի բոլոր նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

## Դ. Բջիջները

50. Բջիջը Հայաստանի Կարմիր Խաչի կազմակերպչական ցանցի սկզբնական միավորն է:

51. Բջիջները կազմակերպվում են քաղաքներում ու գյուղերում և ընդգրկում են այս կամ այն հիմնարկության, գործարանի, զինվորական մասի և գյուղական համայնքի մեջ մտնող՝ Հ. Կ. Խաչի անդամներին:

52. Բջիջների անդամների թիվը գյուղերում և քաղաքային առանձին հիմնարկություններում 10 հոգուց պակաս չպետք է լինի. առավելագույն թիվը չի սահմանափակվում:

53. Բջիջները պետք է տոմարագրվեն համապատասխան շրջանային կոմիտեյի կողմից:

54. Բջիջի ղեկավար մարմինը բջիջի անդամների ընդհանուր ժողովն է, վոր համարվում է օրինական, յեթե ներկա յե անդամների թվի առնվազն կեսը:

55. Յուրաքանչյուր բջիջ իր գործերը վարելու համար ընտրում է վարչական մարմին հետևյալ կարգով՝

ա) մինչև 50 անդամ ունեցող բջիջները ընտրում են մի լիազոր-քարտուղար իր փոխանորդով, նաև մի վերստուգիչ անդամ.

բ) 51-ից մինչև 150 անդամ ունեցող բջիջները ընտրում են 3 անդամից և մի փոխանդամից բաղկացած բյուրո, նաև մի վերստուգիչ անդամ.

գ) 150-ից ավելի անդամ ունեցող բջիջները ընտրում են 5 անդամից ու 2 փոխանդամից բաղկացած բյուրո և 3 անդամից ու 1 փոխանդամից բաղկացած վերստուգիչ հանձնաժողով:

56. Շրջանային համագումարներին յուրաքանչյուր բջիջ ուղարկում է իր պատգամավորը:

57. Բջիջների գործունեության կարգն ու ձևականները, ինչպես նաև շրջանային համագումարի պատգամավորների ընտրության կարգը սահմանվում են առանձին հրահանգով, որը տեղական պայմանների համեմատ կազմում և հաստատում է Կենտրոնական Կոմիտեն:

## V ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

58. Ընկերության միջոցները կազմվում են՝

ա) անդամավճարներից,

բ) գործող օրենսդրությամբ Ընկերությանը վերապահված՝ թատրոնական, հյուրատոսական տուրքերից նաև յերկաթուղային, ջրային և ողային փոխադրության ու այլ տուրքերից.



գ) ընդհանուր և հատուկ նպատակով կատարվող նվիրատվություններից.

դ) դասախոսություններից, ցուցահանդեսներից, գրոսանքներից, համերգներից, ներկայացումներից, գվարճահանդեսներից և այլ ձեռնարկումներից ստացվող մուտքից:

յե) Ընկերության գույքի և զանազան հիմնարկությունների ու ձեռնարկությունների ոգտագործությունից ստացվող մուտքից:

զ) Ընկերության հրատարակությունների վաճառքից.

է) այլ յեկամուտներից:

59. Ընկերության շրջանային կոմիտեների միջոցները գոյանում են այս կանոնադրության 58 հոդ. «ա» և «գ»—«է» կետերում հիշատակված աղբյուրներից:

Ընկերության բոլոր շրջանային կոմիտեները իրենց միջոցների վորոշ մասը՝ Ընկերության Հանրապետական Համագումարի սահմանած չափով, բայց 25 տոկոսից վոչ պակաս, ուղարկում են Ընկերության Կենտրոնական Կոմիտեյին:

60. Կենտրոնական Կոմիտեյի տրամադրության տակ յեղած միջոցները բաժանվում են հետևյալ տեսակների.

ա) Ընկերության ծախքերի համար նախահաշվով հատկացված գումարներ.

բ) պահեստի դրամագլուխ՝ բացառապես պատերազմական ժամանակի կարիքների համար.

գ) պահեստի դրամագլուխ՝ բացառապես տարերային աղետների դեպքում գործադրելու համար.

С С Р АРМЕНИ
КНИЖНАЯ ПАЛ

գ) հատուկ դրամագլուխ Ընկերության առանձին կազմակերպությունները վարկավորելու համար.

դ) հատուկ գումարներ և հատուկ նպատակով կատարվող նվիրատվություններ ու հանգանակություններ:

## VI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

61. Գործառնական տարին վերջանալուց հետո Ընկերության բոլոր շրջանային կոմիտեները կազմում են.

ա) իրենց և իրենց ենթակա հիմնարկությունների գործունեության վերաբերյալ հաշվետվությունը.

բ) իրենց ելքի ու մուտքի կատարողական նախահաշիվները, որ ներկայացվում են շրջանային համագումարին ի քննություն:

Քննությունից հետո այդ հաշիվներն ու նախահաշիվները ներկայացվում են Ընկերության Կենտրոնական Կոմիտեյին:

Ծանոթություն.— Համագումարների միջանկյալ ժամանակամիջոցում հաշիվները քննում են շրջանային կոմիտեները:

62. Շրջանային կոմիտեների անցած հաշիվները ստանալուց հետո Ընկերության Կենտրոնական Կոմիտեն կազմում է ամբողջ Ընկերության գործունեության ընդհանուր հաշիվը, որը և հրապարակում է առանձին ձևով կամ մամուլի մեջ:

63. Ընկերության հաշվետվությունը տարվում է միատեսակ ձևով, որը միօրինակության նպատակով



սահմանվում է ԽՍՀՄ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների ամբողջ Միության համար:

## VII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՔԸ

64. Ընկերության լուծարքը կատարվում է ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահության հատուկ որոշմամբ:

Շրջանային կոմիտեների լուծարքը կատարում է ՀՍԽՀ Կարմիր Խաչի Ընկերության Կենտրոնական Կոմիտեն:

Պետհրատի տպարան Յերևանում

Պատվեր 3981 Գլավլիտ 6672 (բ) տիրաժ 3000

30
КНИЖНАЯ ПАЛАТА
ՀՀ Ազգային գրադարան
NL0926447

1931р — 502

11
2526